

Քիչ 28121
Մարտ 16, 1988

Մեծայարգ
Տիար Նդուարդ Գորգոյան
Միշիգն.

Տարգելի Տիար Գորգոյան,

Հաննցէք Ներքակ գտնել օրինակը Թուրքիոյ Հայոց Գաորիարքական Օս-
թանորդ Տ. Տարօն ՔՏՆՂ. Սիրականեանի Փետրուար 14, 1988 թուակիր Նա-
մակին:

Յամակը բացատրութեան չի կարօտիր:

Շնորհակալ պիտի ըլլանք եթէ բարեհամիր մեզ լուսարանել նամակին
մէջ յարուցուած խնդրին կարակցութեամբ՝ որպէս զի մենք ալ մեր կար-
գին ձեր տեղեկութիւնները փոխանցենք Գաորիարքական Օսթանորդին:

Ձեզի եւ ձեր հարազատներուն կը մտղթենք քաջատողջութիւն եւ յա-
ջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԳՈՐԳՈՒՄ - ԻՍԹԱՆԳՈՒԼ



Իսթանպուլ, 14.2.1988

Համար

Հեռածայն : { Ոստիկան : 27 82 20
{ Փոխանորդարան : 27 03 23

Գերաշնորհ
Տ.ԹՈՐԳՈՍ Ս.ԱՐՔ.ՄԱՆՈՒԿԵԱՆ
Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի
ՆԻՒ ԵՕՐՔ

Սրբազան Հայր,

Օրերս Պատրիարքարան դիմած է մեր համայնքէն ՏԿ. Հեղինէ ԳՈՒՅՈՒՄՃՈՒ-ժն. Տէրութեան որուն քուզինը Արշալոյս ՏՈՒՄԱՆԵԱՆ-ժն. Տէրութեան-վերջերս մահացած է:

Ներիակ կը գտնէք թերթի փոքր մահազդ մը, որուն մէջ ալ յստակ կերեւի թէ ՏԿ. Հեղին Գուլումճու քուզինն է ողբացեալին, որ իր մահէն առաջ քանիցս իր մօտ հրաւիրած է ՏԿ. Հեղինէն իրբեւ մօտաւոր ազգական եւ ժառանգորդ, բայց ան կարելիութիւնը չէ ունեցած ընթացք տալ այդ հրաւերին նիւթական պատճառներով:

Այդ շրջանակներու ծանօթ կազմակերպիչ Հտուար ԳՈՐԳՈՒՄԱՆ օգտուելով ողբացեալին առանձնութենէն, անոր տէր կանգնելու պատրուակով միշտ իր շուրջը եղած է եւ կազմակերպած նաեւ յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնները:

ՏԿ. Հեղինէ որ օրինաւոր ժառանգորդ է ողբացեալին, այս պարագային դիմած է Հտուար Գորգոեանի իր արդար պահանջը ներկայացնելով բայց ընաւ պատասխան մը չէ առած: Ինք կը գնահատէ բնականաբար Գորգոեանի տարած աշխատանքները եւ տեղին կը գտնէ նաեւ անոր ալ որոշ բաժին մը ստանալը, սակայն կը փափաքի նաեւ իր արդար եւ օրինաւոր իրաւունքն ալ լրիւ ստանալ, որուն խիստ կարիքը ունի ՏԿ. Գուլումճու:

Սրբազան հայր, այս բոլորը կը լլան Միչիկան նահանգը, ուր կայ նաեւ Ս. Յովհաննէս եկեղեցին, կարելիութիւնը ունէինք տեղւոյն հոգելոր հովուին կամ թեմական խորհուրդին գրել, բայց խնդրարկուն աւելի պաշտօնական ըլլալու նպատակաւ առաջարկեց Ձերդ Սրբազնութեան պարգել խնդիրը, ինչ որ այլ մտածումներով մեզի ալ մտաջելի թուեցաւ:

Ուստի ջերմօրէն կը խնդրենք Ձեր միջոցներով այս պարագան տեղեկացուի պատկան անձերուն, որպէսզի ՏԿ. Գուլումճուի խնդիրը գտնէ իր լուծումը եւ ստանայ իր արդար եւ օրինաւոր իրաւունքը որուն իսկապէս կարիքը ունի:

Սրբազան Հայր, կը յուսանք, թէ պիտի ջանաք օգտակար հանդիսանալ մեզի եւ խնդրարկուին որ յաւէտ երախտապարտ պիտի ըլլայ Ձեզի երբ ստանայ բարի լուրը, որ միակ ապաւէնը պիտի ըլլայ իր ապագայ կեանքին համար, կարենալ հոգալու օրքտ օրէ սաստկացող նիւթական պահանջները:

Կանխաւ շնորհակալութիւններ մեր եւ ՏԿ. Գուլումճուի կողմէ, Ձեզի կը մաղթենք կառարեալ առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ, յաջողութիւն գործոց եւ բարի ձեռնարկներու լիակատար արդիւնաւորութիւն:

Մատչելով ի համբոյք Ձերդ Ս. Աջոյն, միամբ որդիական ակնածանօք՝

DERDERIAN
ARIALUS Sister of George Sarafian, Cousin of Meghie Kiyamcu (Island) and the Hampar Dounanian family. Also mourned by the Edward B. Korkolan, Edward Haic Korkolan and George Nigoghosian families. Resting at the Colonial Chapel-Edward Korkolan Funeral Home 1421 W. McNichols, Wednesday from 3-9 p.m. Prayers Wednesday 7:30 p.m. Services Thursday 11 a.m. at St. Johns Armenian Church, Southfield. Interment Woodlawn to

Խոնարհ աղօթակից
Տարօն Զահանայ Սիրականեան

Signature
Պատրիարքական Փոխանորդ

Քիւ 28120
Մարտ 16, 1988

Արժանաշնորհ
Տ. Յարօն ԶԳՆՅ. Սիրականեան
Պատրիարքական Փոխանորդ
Իսթանպուլ:

Արժանաշնորհ Տէր Հայր,

Ստացած ենք Փետրուար 14, 1988 թուակիր ձեր նամակը՝ Տիկին Հեղի-
նէ Գույուսմենանի ներկայացուցած ժառանգական հարցին կապակցութեամբ:

Ձեր նամակին օրինակը դրկեցինք Տիար Եղուարդ Գորգոյեանի և Նրբ
ստանենք պատասխանը՝ անմիջապէս կը անդեկացնենք ձեզի:

Բարի եղէք մեր սիրակիր ողջոյնները փութանցել Պատրիարք Արքայան
Հօր:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ